**GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT**
Աշակերտների աջակցման ծառայություններ
223 North Jackson St., Glendale, CA 91206-4380 • Telephone: 818-241-3111, Ext. 1283 • Fax: 818-547-0213

# ԽՆԱՄԱԿԱԼԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

## 2021-2022

Նահանգային օրենսդրությամբ «Չափահաս խնամակալի» կատեգորիա է հաստատվել (ազգական կամ ոչ-ազգական), ով իրավասու է իր խնամքի տակ ապրող անչափահասին գրանցել դպրոցում: Նախքան ժամադրություն ստանալը, անհրաժեշտ է բավարարել հետևյալ պայմանները և լրացնել դիմումնագիրը:

1. Լրացնել խնամակալի լրացուցիչ տեղեկությունների թերթիկը (Form A):
2. Լրացնել խնամակալի լիազորության վկայագիրը (Form B):

   Ազգակցական կապը փաստելու համար պահանջվում է փաստաթղթեր ներկայացնել (տեսնել

   Form C): Եթե ժամանակավորապես խնամակալություն փնտրող ազգականը չկարողանա փաստել ազգակցական կապը, նրանից կպահանջվի այս փաստաթուղթը ստորագրելուց երեք ամիսների ընթացքում խնամակալության լիազորագիր ներկայացնել: Խնամատարության լիազորագիր ստանալու համար պետք է կապվել (888) 811-1121 հեռախոսահամարով Կալիֆորնիա նահանգի Department of Children and Family Services-ի հետ կամ եթե նախընտրում

   եք ստանալ խնամակալության խնդրագիր, ապա զանգե՛ք Լոս Անջելոսի Probate Court անվամբ դատարանը (213) 974-5471 հեռախոսահամարով:

3. Գլենդելի հանրային դպրոցների տարածքում բնակվող աշակերտն ու խնամակալը պետք է անձամբ ներկայանան ստորագրելու համապատասխան այս փաստաթղթերը:
4. Պետք է ներկայացվի բնակության հաստատում (կենցաղսպասարկման վերջին երկու ստացականներ), լուսանկարով ինքնության փաստաթուղթ և խնամակալի ներկայի հասցեն:
5. Պահանջվում է Transcripts կամ հաճախած դպրոցի վերջին վկայականը և առողջապահական և պատվաստումների զեկույցը:
6. Ներկայացնել նոտարի վավերացված նամակ. խնամակալը պետք է վավերացվի ծնողի կողմից, որը թույլ է տալիս իր երեխային բնակություն հաստատել մեր կրթաշրջանում բնակվող խնամակալի հետ:
7. Երբ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը պատրաստ լինեն, ***խնդրվում է զանգահարել (818) 241-3111, ներքին 1285 հեռախոսահամարով և ժամադրություն ստանալ - Երկուշաբթիից մինչև Ուրբաթ, առավոտյան ժամը 8:30-ից 4:00-ը:***

Եթե առկա լինեն բոլոր փաստաթղթերը և ներգրավված բոլոր անձինք, խնամակալի լիազորումը չպետք է տևի ավելի քան 15 րոպե:

***Խնդրվում է նկատի ունենալ՝***

- Որևէ կեղծ փաստաթուղթ ներկայացնելու դեպքում աշակերտն **անհապաղ** դուրս կգրվի դպրոցից:
- Բնակությանը մոտիկ դպրոցում տեղ չլինելու դեպքում (Capped) աշակերտը կտեղավորվի կրթաշրջանի մի այլ դպրոցում, որտեղ տեղ կա:

***Revised 10/2020***

# GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT

223 North Jackson St., Glendale, California 91206-4380
Telephone: 818-241-3111, Ext. 1283 • Fax : 818-547-0213


ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Արդյո՞ք աշակերտը ներկայումս մի այլ կրթաշրջանից հեռացման հրամանի տա՞կ է: (Կրթական օրենսդրութ. 48915.1b):

☐ Ոչ ☐ Այո

## ԽՆԱՄԱԿԱԼԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**2021-2022**

**Form A**

______________________________ ____________ ________________
Աշակերտի ազգանունը անունը միջնանունը    Ծննդ. ամսաթիվը    Դասարանը 2020-2021թ.

Բնակության դպրոցը ________________________________________

*Նշում*՝ Բնակության դպրոցում տեղ չլինելու դեպքում (Capped), աշակերտը կտեղավորվի կրթաշրջանի մի այլ դպրոցում:
Պատճառը, որ աշակերտը չի ապրում իր ծնողի հետ՝ ________________________________

__________________________________________________________

Խնամակալի անունը՝ ________________________________________

Հասցեն՝ __________________________________________________

__________________________________________________________
Տան հեռախոս    Աշխատանքի հեռախոս    Բջջային

*Ծնողի/Դատարանի կողմից նշանակված խնամակալի տեղեկությունները*՝ ________________________

Ստորև բերված կետերը լրացնելով և այս թերթիկը ստորագրելով անհատը հանձն է առնում ծրագրում տեղավորման, ֆինանսական և կարգապահական խնդիրներին առնչվող հաճախումների և վարքագծային կանոնների պատասխանատվությունը:

Ծնողի/Օրինավոր խնամակալի անունը՝ ________________________________________

Հասցեն՝ __________________________________________________

__________________________________________________________
Տան հեռախոս    Աշխատանքի հեռախոս    Բջջային

Աշակերտի համար ֆինանսական պատասխանատվության հանձնառու անձ(ինք)՝ ________________________

Վերոնշյալ աշակերտը բնակվում է իմ տանը, որպես իր բնակության վայրը, և ես հանձն եմ առնում նրա դպրոց հաճախումներին վերաբերող բոլոր պարտականությունները, երբ նա բնակվում է ինձ հետ: Ես նույնպես հասկանում եմ/համաձայն եմ հետևյալ պայմանների հետ.

1. **Պայմանագրի ժամանակահատվածը.** Այս պայմանագիրը *կարիք չունի* տարեկան թարմացման:
2. **Բնակություն.** Աշակերտը պետք է 2020-2021 *ուս*տարվա ընթացքում շաբաթը յոթն օր բնակվի վերոնշյալ հասցեում: Ոչ մի բացառություն: Պարբերական կացության ստուգումներ կկատարվեն ամբողջ տարվա ընթացքում: Եթե սույն պայմանագրի ընթացքում հասցեի որևէ փոփոխություն լինի պատասխանատու չափահասի կամ աշակերտի համար, ապա Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը պետք է անմիջապես տեղեկացվի *երեք (3) օրվա* ընթացքում: Եթե երբևէ կրթարջանի ուշադրությանը հանձվի, որ աշակերտը *չի* բնակվում կրթաշրջանի տարածքում, աշակերտն *անմիջապես* դուրս կգրվի դպրոցից:
3. **Կանոնավոր հաճախումներ, լավ վարքագիծ և գնահատականներ.** Բոլոր աշակերտներից պահանջվում է կանոնավոր հաճախումներ, գոհացուցիչ վարքագիծ և գնահատականներ: Եթե դպրոցի ղեկավարության կարծիքով աշակերտի վարքագիծը ընդունելի չափանիշներից ցածր է, անհրաժեշտության դեպքում կձեռնարկվեն կարգապահական միջոցներ՝ ներառյալ աշակերտին մի այլ դպրոց փոխադրելը:
4. **Նոտարի վավերացված նամակ.** Խնամակալը պետք է նոտարի կողմից վավերացված ծնողի նամակ ներկայացնի, որը թույլ է տալիս իր երեխային բնակություն հաստատել մեր կրթաշրջանում բնակվող խնամակալի հետ:
5. **Խնամակալության լիազորագիր.** Եթե դուք լիազորված ազգականը չեք, ձեզանից կպահանջվի ներկայացնել խնամատարության լիազորագիր, սույն փաստաթուղթը ստորագրելուց երեք (3) ամսվա ընթացքում:

Ամսաթիվ՝ ________________________    Խնամակալի ստորագրություն________________________

### - ԼՐԱՑՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ -

Executed at ________________________, _ day of ________________________________________, ________________20

☐ Qualified Relative    ☐ Need Foster Home License    Verified (date)

Authorized Signature____________________________________________

Residency Verification Home Visit (dates)________________________________________

☐ Verified    ☐ Unverified    ☐ Cancelled    ☐ Fraud

Date School Informed ________________________________________ By ____________________________________________

**GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT**
223 North Jackson St., Glendale, California 91206-4380
Telephone: 818-241-3111, Ext. 1283 • Fax: 818 -547-0213

Աշակերտների աջակցման ծառայություններ

**Form B**

## ԽՆԱՄԱԿԱԼԻ ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

**2021-2022**

**Այս լիազորագրի օգտագործումը թույլատրվում է California Family Code օրինագծի 11-րդ բաժնի կետ 1.5-ի համաձայն (սկսյալ 6550 բաժնից):**

*Ցուցումներ.* 1-4 կետրերի լրացումը և լիազորագրի ստորագրումը անհրաժեշտ են աշակերտի գրանցման թույլտվության և դպրոցի հետ կապված բժշկական սպասարկումների համար: 5-8 կետերի լրացումը պահանջվում է ցանկացած այլ բժշկական օգնության թույլտվություն ստանալու համար:

***Խնդրվում է պարզ գրել***

Ստորև նշված աշակերտն ապրում է իմ տանը և ես 18 տարեկան կամ ավելի մեծ եմ:

1. Աշակերտի անունը՝

2. Աշակերտի ծննդյան ամսաթիվը՝

3. Խնամակալի անունը՝

4. Տան հասցեն՝

5. (   ) Ես՝ երեխայի պապիկը, տատիկը, հորեղբայրը, քեռին, մորաքույրը, հորաքույրը կամ այլ լիազորված ազգականն եմ (կարդալ ստորև գրված «լիազորված ազգականի» բացատրությունը):

   *Եթե դուք «լիազորված ազգական»-ը չեք, ապա ձեզանից կպահանջվի տրամադրել խնամակալության լիազորագիր, այս փաստաթուղթը ստորագրելուց երեք (3) ամսվա ընթացքում:*

6. Ընտրեք մեկը կամ երկուսն էլ: (օրինակ՝ եթե մեկ ծնողն արդեն տեղեկացվել է, իսկ մյուսը հասանելի չէ:

(   ) Ես տեղեկացրել եմ ծնողին կամ օրինական խնամակալին, բժշկական օգնություն տրամադրելու լիազորության մասին և ոչ մի առարկություն չեմ ստացել:

(   ) Ես ներկայումս չեմ կարողանում կապվել աշակերտի ծնողի կամ օրինական խնամակալի հետ նրանց տեղյակ պահելու իմ լիազորության մասին:

7. Խնամակալի ծննդյան ամսաթիվը՝ ______________________________

8. Խնամակալի Կալիֆորնիայի վարորդական իրավունքի կամ լուսանկարով նույնականացման քարտի թվահամարը՝ ____________

| | |
|---|---|
| ***ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝*** | Մի՛ ստորագրեք այս թերթիկը, եթե վերը նշված տեղեկություններից որևէ մեկը ստույգ չէ, այլապես դուք որպես հանցագործ կտուգանքվեք, կբանտարկվեք կամ երկուսն էլ: |

Կեղծարարության տուժի և Կալիֆոռնիա նահանգի օրենքի հայտարարության համաձայն վերոհիշյալը ճիշտ է:

Ստորագրություն՝ ____________________________________________ Ամսաթիվ՝ __________

- Այս հայտարարությունը չի ազդելու աշակերտի ծնողի կամ օրինական խնամակալի իրավունքների վրա՝ կապված աշակերտի խնամքի, խնամակալության և հսկողության հետ և չի նշանակում, որ խնամակալը աշակերտի օրինական խնամակալությունն ունի:
- Այն անձը, ով վստահում է այս լիազորագրին, պարտավոր չէ հետագա հետաքննություն անցկացնել:
- Այս լիազորագիրը ամեն տարի թարմացնելու կարիքը չկա:
- Թիվ 5 կետում նշված «Ազգական բառը» նշանակում է ամուսին, ծնող, խորթ ծնող, եղբայր, քույր, խորթ եղբայր կամ քույր, արյունակից եղբայր կամ քույր, հորեղբայր, քեռի, մորաքույր, հորաքույր, քրոջ/եղբոր աղջիկ, քրոջ/եղբոր տղա, հորեղբոր/քեռու/հորաքրոջ/մորաքրոջ երեխա, կամ որևէ արյունակից ազգական, նույնիսկ եթե ամուսնությունը ապահարզանով կամ մահով լուծարված լինի:
- Եթե դուք երեխայի ազգականը կամ ներկայումս օրինական խնամակալը չեք, ապա օրենքը պահանջում է, որ անչափահասի խնամակալության համար խնամակալության լիազորագիր ստանաք, որպեսզի կարողանաք անչափահասին խնամել: Հարցերի դեպքում կարող եք կապվել Երեխաների և ընտանեկան ծառայությունների վարչության գրասենյակի հետ՝ 1-888-811-1121 հեռախոսահամարով:
- Եթե երեխան այլևս ձեզ հետ չի ապրում, դուք անհապաղ պետք է տեղեկացնեք դպրոցին, Աշակերտների ծառայությունների գրասենյակին, ծնողներին, տեղական իշխանություններին (անհրաժեշտության դեպքում) և առողջապահական ծառայություններ մատուցողին/առողջապահական ծառայության պլանին, որոնց հանձնվել է այս լիազորագիրը: Եթե չունեք Կալիֆորնիայի վարորդական վկայական կամ այլ լուսանկարով նույնկանացման քարտ, խնդրվում է տրամադրելմեկ այլ ինքնության քարտ, ինչպիսիք են՝ սոցիալական ապահովության կամ Medi-Cal-ի թվահամար:

*Revised 10/2020*

# GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT
## Student Support Services
223 North Jackson St., Glendale, CA 91206-4380 • Telephone: 818-241-3111, Ext. 1283 • Fax: 818-547-0213


**Form C**

## ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

| *ԵԹԵ ԵՐԵԽԱՆ ՁԵՐ՝* | *ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ* |
|---|---|
| Տղան կամ աղջիկն է | Երեխայի ծննդյան վկայական |
| Եղբայրը կամ քույրիկն է | Երեխայի ծննդյան վկայական և եղբոր/քրոջ ծննդյան վկայական |
| Խորթ տղան կամ խորթ աղջիկն է | Երեխայի ծննդյան վկայական և երեխայի ծնողի ու խորթ ծնողի ամուսնության վկայական (եթե ազգակցություն չունեցող խորթ ծնողն է գրանցում երեխային) |
| Արյունակից եղբայրը/քույրը կամ խորթ եղբայրը/քույրն է | Երեխայի ծննդյան վկայական և արյունակից եղբոր/քրոջ ծննդյան վկայական (վկայականը պետք է արյունակից ծնողի պարագան ապացուցի) |
| Քրոջ կամ եղբոր աղջիկը կամ տղան է | Երեխայի ծննդյան վկայական և մոր կամ հոր ծննդյան վկայական, որն ազգակցություն ունի հորաքրոջ, մորաքրոջ կամ քեռու, հորեղբոր հետ, և հորաքրոջ, մորաքրոջ կամ քեռու, հորեղբոր ծննդյան վկայական |
| Հորաքույր/մորաքույր, քեռի/ հորեղբայրն է | Նույնն է ինչպես որ քրոջ աղջկա/տղայի կամ եղբոր աղջկա/տղայի համար |
| Հորեղբոր կամ մորեղբոր աղջիկը կամ տղան է (առաջին զարմիկ) | Երեխայի ծննդյան վկայական և առաջին զարմիկի ծննդյան վկայական և զարմիկների ծնողների ծննդյան վկայականները |
| Թոռը կամ թոռնուհին է | Երեխայի ծննդյան վկայական և երեխայի ծնողի ծննդյան վկայական, որը պապիկ-տատիկի տղան կամ աղջիկն է լինում |
| Ծոռը կամ ծոռնուհին է | Նույնն է ինչպես որ պապիկ-տատիկինն է և երեխայի պապիկ-տատիկի ծննդյան վկայականները, որոնք պապիկ-տատիկի աղջիկը կամ տղան են լինում |
| Այլ ազգական | Ավելացնել ևս մի կետ վերոհիշյալ ազգակցության ցանկին |

Ծննդյան վկայական(ներ)ը առկա չլինելու դեպքում, կարելի է ներկայացնել մկրտության կամ եկեղեցական այլ փաստաթղթեր և կամ անձնագիր, պայմանով, որ այդ փաստաթղթերն ապացուցեն ազգակցության կապը:

*Նշում՝* «Ազգական» նշանակում է ամուսին, ծնող, խորթ ծնող, որդի, դուստր, քույր, խորթ եղբայր, խորթ քույր, արյունակից եղբայր, արյունակից քույր, քեռի, հորեղբայր, մորաքույր, հորաքույր, քրոջ կամ եղբոր աղջիկ, եղբորորդի, քեռորդի, հորեղբորորդի, հորաքրոջ որդի կամ որևէ այլ անձ, որը ներկայացվել է "grand" կամ "great" նախածանցներով կամ սույն բնորոշման մեջ մատնանշված անձերի ամուսինները, նույնիսկ այն բանից հետո, երբ ամուսնական կապը լուծվում է մահվամբ կամ ամուսնալուծությամբ

*Կալիֆորնիայի կանոնակարգերի օրենսգիրք, խորագիր 22, §87001*